ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ՀԱՇՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳ

Պարտադիր կուտակային կենսաթոշակային համակարգի Մասնակցին մինչև 2015 թվականի ապրիլի 15-ը կտրամադրվի կենսաթոշակային հաշվի վերաբերյալ նախորդ տարվա հաշվետվությունը: Այն տարին մեկ անգամ կտրամադրվի անվճար:

Մասնակիցը կարող է իր հաշվետվությունը ստանալ թղթային կամ էլեկտրոնային եղանակով, ինչպես նաև որոշել ստանալ կամ դադարեցնել նշված տեղեկատվության ստացումը՝ ներկայացնելով «Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ նախորդ տարվա տարեկան հաշվետվությունը ստանալու» դիմում:

Եթե Դուք չեք ընտրում հաշվետվության ստացման Ձեր համար նախընտրելի եղանակը, ապա հաշվետվությունն ուղարկվում է միայն առաջին տարվա համար թղթային տարբերակով՝ մասնակցի գործատուի կողմից տրամադրված հասցեով կամ մասնակցի կողմից համակարգում նախապես լրացված հասցեով:

Հաշվետվությունը թղթային եղանակով ստանալու համար Դուք ամեն տարի պետք է լրացնեք «Կենսաթոշակային հաշվի վերաբերյալ նախորդ տարվա տարեկան հաշվետվությունը ստանալու» դիմումը, իսկ էլեկտրոնային տարբերակով հաշվետվությունը ստանալու համար նշված դիմումը ներկայացվում է մեկ անգամ և հետագա տարիներին Դուք շարունակում եք ստանալ էլեկտրոնային հաշվետվությունը: